ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՄԷԿ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆԸ

Յովհաննէս Սարկաւագ Վարդապետ ԺԲ. դարու մեր նշանաւոր հեղինակներէն մին է (✠ 1129)։ Իր անունով ցարդ ծանօթ էր միայն՝ Ղեւոնդեանց նուիրուած մէկ շարական՝ «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք» սկզբնաւորութեամբ, որ շարակնոցներու մէջ գրուած է մերթ իբրև Մանկունք կամ Համբարձի, և մերթ իբրև Ճաշու։

Մեր Ձեռագրատան թիւ 503 մագաղաթեայ, բոլորագիր հին Շարակնոցը, որուն ստացողն է եղած «Սմբատ թգր. Հայոց» (1297–1298), կը պարունակէ «անձինք»ի ձեւով գրուած Ղեւոնդեանց շարական մը սա խորագրով. «Կանոն Սրբոց Ղեւոնդեանցն Յոհաննէս Վարդապետի ասացեալ մականուն Սարկաւագի» (Թուղթ 83)։ Յաջորդ 84 և 85 թիւ թուղթերով կը վերջանայ սոյն շարականը։ Իսկ թիւ 85էն յետոյ եկող թերթը, որ 86 թիւը կը կրէ, կը սկսի Ղեւոնդեանց Կանոնի Ողորմեային Բ. տունով «Պանծալի սուրբ գաւակաւքն», որմէ կը հասկցուի թէ Հարցը և Մեծացուսցէն պարունակող թերթը կտրուած հանուած է թուղթերու թուագրումէն առաջ։ Այս կորուստը ցաւալի է մեծապէս։

Ներկայ շարականին ոճը բոլորովին կը նմանի «Պայծառացան» շարականի ոճին և կ'ապահովէ մեզ թէ Սարկաւագ Վարդապետի հարազատ արտադրութիւնն է այն։ Հոս կը դնենք զայն ամբողջութեամբ։

Անհասանելի տեսչութեամբ գիտմամբ փրկութեանն Աստուծոյ, որով կեցուցան ընդհանուր վերըստին որդիք մարդկան, առաքեցելով որ ի ծոց հօր(*) համագոյակից բանին. յամենայն արարածոց փառաբանի անգադար երգով։

Բոլոր յէից նախահոգակ զօրութիւն, որ ի սկզբանէ աշխարհի սահմանեալ ընտրեաց զարժանաւորս ընտրութեան, երևելով յաշխարհի անտեսանելոյն ըզփըրկութիւն յառաջագոյն յայտնեալ մարդասիրապէս։

Գուշակմամբ նախատեսացըն հրաւիրեաց ըզծանուցեալսն յառաջագոյն զօրս և կոչեցն, յլինելով բանին մարմին ի գերագարդ երկնային և լուսաւոր առագաստին, ժառանգել զհայրենի աւանդն անտրտում կենացն։

Դասք արդարոցն ընծայեալք Աստուծոյ ի փրկութիւն ընտրեալք տիեզերաց, պատեցին զըմբռնեալսն ի ծառայութենէ մահու. որք և փառաւորեն զԹագաւորն անմահ։

Երկիւղի եղեն մահու գերագանցք ըստ պարզագոյն բնութեան մարմնականացն, անտանելի չարչարանօք նահատակեալք. որք և փառաւորեն զԹագ.։

Զաշխարհական ընթացեալ ի բաց ըզբաղմամբք և փութացան սիրով հետեւել Քրիստոսի. զի ընկալցին զանթառամ լուսեղէն պըսակն. որք և փառ.։

Էին բանի մարմնացելոյ տաղաւարք և փըրկական գենման նորա սպասաւորք, քահանայք նուիրիչք Մեծի ընծային. որք և փառ.։

Ընտանեգոյն ընծայք Մեծի ընծային և զենմունք կատարեալք հօր պատարագին, այցելուք ճշմարիտք որդւոց Սիոնի. որք և փառ.։

Թողեալ ըզքին զամենայնըն վասն Տեառն և խնդրեցին հանդիպիլ որում բաղձային, և գտին զոր սիրեցին ի մանկութենէ. որք և փառ.։

Ժամանեալ հասին նըմա յոր յուսային և տեսին ըզնա ուր ոչ կարծէին, անկարծելեաւ անձամբ խառնեցան ի գու[ն]դս ընտրելոցն. որք և փառ.։

Ի տեսիլ ցնծացան երկնաւոր լուսոյն, պատմութեամբ նորոյ առն ըսքանչելոյ, նահատակեալք նովաւ ընդդէմ թըշնամւոյն. որք և փառ.։

Լցան ստամբք հոտով անուշիւ և բերկրեցան ի լուր քարոզիցն, զաւետիս մըշտընջենաւոր կենացն. որք և փառ.։

Խընկօք աղօթից ուղերձեալք քաւեցին զանգիտութիւն հօտին ըղողալանս, և կանգնեցին միւս անգամ զանկեալսն ի մեղս. որք և փառ.։

Ծաղկեալք յարանց անձանց նորոգմամբ յուսով պըտղոյ երկրին կենդանեաց, ընդ ժառանգորդս երանութեան վիճակացն. որք և փառ.։

(*) Ձեռագրի աւ-ին տեղ մենք օ գրած ենք հոս և այլուր։

digitised by A.R.A.R.@

Պանդնեցան զօրութեամբ յերկեւղ թըշնամեացն և ծաղեցան որպէս զարեգակն, և եղեն անուանի ընդ տիեզերս ամենայն. որք և փառ.։

Ջամբաւք հրաշից նորաձեւութեան վկայիցն և աստուածայնոց տեսլեանց պատմութիւնք, խոցեցին զհոգիս մահութիւնալից բընաւորին, և տարակուսեալ վարանէր անօրէն իշխանն. որք և փառ.։

Ցեռվ նախնոյ կամակոր վիշապին խոռամանգել պատրէր զանհաւատիցըն բանակս, և ծածկել զանթաքչելի աստուածակերտ զօրութիւն. որք և փառ.։

Ղօղա[ն]ջէր հակառակս ինքեան զանմիտ պատուիրանն և ընդդիմանայր հըզօրին ձեռին, կարծրասիրտ քան ըզփարաւոնն երևեալ որպէս զի ծածկիցի գեհեննոյն խորոքն։

Ճըշմարիտ վըկայից քոց զօրութեամբ նոցա խարխափ անվըրանիկ, հաստատեա(յ) զեկեղեցի քո խընդրրուածովք նոցա, և փառաւորեա անկապուտ զորդս։

Մարտադիր ըզհանդիսից նոցա քաջութեանն և անապականութեան պըսակաց պարգևիչ, հաստատեա զեկեղեցի քո խընդըր.։

Յորոյ զօրութիւն խրախուսեալ երջանիկացն արհամարհեցին զատօրեա վըտանգն. հաստատեա զե.։

Ծնորհող(*) որոց յեկեղեցւոջ զանազան պարգևաց և հաստարմատ հիմն ամենայն բարութեանց և տալեալ վըկայական պըտղոյ ապաքինութեան աղաչանօք սոցա կեցուցես ըզմեզ։

Որ խոստացար հերքել զըղձութեան դըժոխոց կամողին մարտընչել ընդ քում ստեղծուածոյն, զոր կանգնեցեր բազմութեամբ նիւթոց վըկայիցն անձամբ։

Ջեղև ուրախ անկմամբ բանից քոց չարառէր թըշնամին զի քև զինեալքն են անյաղթելիք. մինչ զի մարմնով կոխել զանմարմինին չարութիւնն և ի պարծանս մեզ առաջի քո Տէր։

Պարտական անչատուած օրինօքն և ամպարիշտ խոտորեալ ի պաշտամանըն հասանող բանիւք իւրեանց ցուցան տապալիչք և կենարար բանին զանգիտեալ քարոզք։

Ջովացեալ աճեաց կըրկնակի զօրութեամբ բարեպաշտին հաւատոյ յարգիւն ընդ բանին, և վըտակօք պատուական արեանցըն յանդաստանըս ոըրտից ամպարիշտ ազգին։

Ռետ[ն]իւք քաղցու և բըժըշկականաւ հոգւոց եղեն դարմանիչք ախտացեալ անձանց ընծայեալ Քրիստոսի բազմութիւնս անհիւանդ արանց կամողին ըզկեանս ամենայն մարդկան։

Սըրբեցին զաշխարհ ի տըղմոյ մեղաց հեղեղօք մաքրագործ պատուական սուրբ արեանց, և կեցուցին տապանաւ հաւատոյ ի ծովէ անօրէնութեան զընկըղմեալ հոգիս անդընդօք չարեաց։

Վերանուեալ հասին բազմաջան երկ(ե)օք ի նաւահանգիստն անվըրդով կենաց, նաւապետեալք առ ամենապ[ա]յծառ իմաստունն որ աստուածապէս տիրէ զօ[ր]ութեան ծովու։

Տագնապի հասոյց խռովարար հողմոյն և ընկըրկեաց սաստիւ զամեհի ալիսն, հաստատել յանկասկածն աշխարհ նաւազանց իւրոց ի քաղաքըն վերին պատրաստել նոցա։

Րենական մասին բազձալոյ ժամանեալ յերկինս և տանել ընդ գերակայ հոգւոյն, զյաղթութեանն երգել ի պատիւ նորա անդադար երգով։

Ցընծամբ և մեք յուսոյ տօնի կատարման սոցա ի պատիւ զօրութեան քո Քրիստոս, որ պահես հաստատուն ըզգուշանութիւն յուսոյ նոցա և անշարժ ի քեզ զհաւատոյ պաշտօն։

Ւիւրեանց լուսոյն արեամբ զաշխարհ ի յանցանս լինելով քեզ չարչարակից, նախահաւաք վըկայդ վըկայից զօրութիւն և պարգևիչ նոցա անվախճան բարեաց։

Փըրկեա զեկեղեցի քո յանօրինաց բըռնութեանց և հաստատեա անշարժապէս ի քեզ, նըւէր պատարագի արեանց վըկայիցն և ի մաղթանըս սոցա մարդասէր փըրկիչ։

Քաղցրութիւն սիրոյ քո գեղեալ հեղցի ի մեզ տեսուչ հօտի քո քաղցր և բարի, որ ընտրեցեր դասանց քոց հովիւս առաքինասէրս մնաանել ընդ քեզ ի փրկութիւն խաչանց։

Շարականս Գկ ձայնի վրայ է և խազգըրուած ըստ պատշաճի։

Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ

(*) Ն գիրով սկսած տունը կը պակսի։

digitised by A.R.A.R.@